ԽԴ

Հետաքրքրաշարժ նիւթերով լի է հետևեալ նամակը։ Անոնք գլխաւորապէս վանական կարգերու, ինչպէս նաև առուծախի շուրջ տրուած մանրամասն տեղեկութիւններ են, ինչ որ կը ցուցնեն՝ թէ ժամանակը դարերու շրջանին մէջ ինչպիսի՛ հսկայ փոփոխութեանց կ՚ենթարկուի։

Գերայարգելոյ և վսեմագունեղի տեառն տեառն
Մխիթարայ Աբբայ Հօրն մերոյ

. . . . Թագաւորին[1] (Վիեննայի) Խոստովանահայրն ճէզուիթ է, և կայսրն զնա ընդհանրական փարուքեա[2] է հաստատեալ, վասն որոյ տեղւոյս ճէզուիթքն փարուքայութիւն[3] առնեն, և թէպէտ կայսրն տուեալ է զժողովուրդն եպիսկոպոսին զի վասն նոցա արասցէ զփարուքայութիւն, բայց ոչ զզինուորսն, զի վասն զինուորաց կայսրն ի տարւոջ Ռ զօլաթայ տայ ճէզուիթաց. նոյնքան ևս ասեն ի զինուորաց զայ..։ Սոքա սկսեալ են վերակերտել զվանս իւրեանց. նիւթքն սորին ի թագաւորէն տրի, իսկ վարձքն աշխատողաց ինքեանք վճարեն. 10 տարին հազիւ եզերի ասեն. բաց ի նիւթիցն ասեն թէ եօթանասուն Ռ զօլաթայով հազիւ եզերի։ Կափուճինաց նիւթն և աշխատողաց վարձն, թագաւորն և Լվճէնիոսն[4] տան. սոցին վանքն փութով եզերի քան զայլս վանս կարգաւորաց։ Աստ գտանին 6, 7 կարգ, բնաւն սկսեալ են շինել, թող զքաղաքացիս, որք ի բազում տեղիս սկսեալ են շ[ի]նել զտունս և զխանութս մեծածախս, և վասն շինման Ալէքսանդր բրինձին միլիոն է գնացեալ ասեն։ Քաղաքս այս զկնի հնգետասանից ամաց այնքան բազմանալոց է մարդկամբք, մինչ զի անդր անցանելոց է ամրութեամբ և մարդկամբք քան զվէնա, թէպէտ այժմ լի է մարդկամբ և օր ըստ օրէ աւելանայ, բազմիցս առ ի չգոյէ նիւթոց վարպետքն պարապ մնան, և վասն թուվլայի և քիրէճի 40, 50 տեղ փուռ վառի, և վասն միոյ փռան 24 օրն 160 արապայ փայտ գնայ. և ըստ այսմ հաշուեայ, թէ բնաւիցն ի բոլոր տարւոջ որքան փայտ գնայ, նաև որքան մարդիկք ի պատճառս սոցա դատին և աշխատին։ Այսքան փռան ջերմութիւնն և քիրէճի հոտն՝ քաղաքիս դոյն ինչ ապականեն զօդն։ Զբոլոր և զահագին քաղաքս այս պարսպաւորեալ են, թէպէտ ոչ է եզերեալ։ Նաև յետ եզերման պարսպիս այսորիկ շ[ի]նելոց են զոմանս բերդորայս արտաքոյ պարսպին։ Վերջապէս սմին նման ի ներքոյ արեգական անկարելի է գտանելն..։ Պարսպաց և բերդից փռոտն[5] է ինկիլիզ, տարին ունի ի թագաւորէն աւելի քան 15000 զօլաթայ..։ Ասեն թէ յամենայնում տարւոջ վասն շինման քաղաքիս ի թագաւորէն միլեոններ գայ աստ. պարսպին 1 թուվլան խարճովն՝ 10 սօլտի լինի. և խարճն պարսպին ըստ ոմանց փափն վճարէ ասեն։ Տեղւոյս մուռերքն[6] և մանուալքն[7] նէմսէյ են, և խիստ յամր բանին, և յաւուրն 3 ժամ հանգչին և ոչ

---

1. Կարոլոս Զ.։
2. Parroco = ժողովրդապետ։
3. Ժողովրդապետութիւն։
4. Եւգենիոս սավոյացի իշխան։
5. Պետ։
6. Որմնադիր։
7. Գործաւոր։